



MICHELLE BAASS
DIRECTOR

State of California—Health and Human Services Agency
Department of Health Care Services



GAVIN NEWSOM
GOVERNOR

**Կարևոր նորություն ավելացման մասին
«Medicare Savings Programs»-ի ունեցվածքի սահմանաչափը**

«Medicare Savings Program»-ի հարգելի դիմորդ.

California-ի նոր օրենքի համաձայն՝ բարձրացվում է այն ունեցվածքի (գույքի և դրամական միջոցների) քանակը, որն անձը կամ ընտանիքը կարող է ունենալ և իրավունակ լինել «Medicare Savings Programs»-ի համար՝ այն ծրագրի, որը վճարում է «Medicare»-ի ապահովագիծը և գրպանի ծախսերը: Այն ունեցվածքը, որը մենք հաշվի ենք առնում, պարունակում է բանկային հաշիվները, կանխիկ գումարը, երկրորդական ավտոմեքենաները և տները և այլ ֆինանսական միջոցներ:

2022 թ. հուլիսի 1-ից «Medicare Savings Programs»-ի ունեցվածքի սահմանաչափը բարձրացվելու է

2022 թ. հուլիսի 1-ից բարձրացվելու են ունեցվածքի սահմանաչափերը, որոնք մենք հաշվի ենք առնում, երբ որոշում ենք, թե արդյոք Դուք իրավունակ եք «Medicare Savings Program»-ի համար: Գումարը կախված է Ձեր տանն ապրող անձանց թվից.

Տանն ապրող անձանց թիվը	Ունեցվածքի հին սահմանաչափը	Ունեցվածքի նոր սահմանաչափը
1 անձ	\$2,000	\$130,000
2 անձ (նախկինում «զույգ»)	\$3,000	\$195,000

Եթե Դուք «Medicare Savings Program»-ի համար դիմել եք հունիս ամսին՝ մինչև 2022 թ. հունիսի 30-ը, և Ձեր ունեցվածքը գերազանցել է ունեցվածքի հին սահմանաչափը, ապա Ձեր շրջանը որոշում կընդունի 2022 թ. հուլիսից հետո Ձեր իրավունակության կապակցությամբ: Եթե մենք հաստատել ենք «Medicare Savings Program»-ի համար ներկայացված Ձեր դիմումը 2022 թ.

հուլիսի 1-ին կամ դրանից հետո, մենք Ձեզ նամակ կուղարկենք, որում նշված կլինի մեր որոշումը:

Եթե 2022 թ. հունվարի 1-ից մինչև 2022 թ. հունիսի 30-ը Ձեր ունեցվածքը «Medicare Savings Program»-ի իրավունակունակության համար սահմանված չափից ավելի են եղել, բայց այժմ չի գերազանցում ունեցվածքի նոր սահմանաչափը, ապա հնարավոր է, որ հիմա Դուք իրավունակ լինեք «Medicare Savings Program»-ի համար: Եթե կարծում եք, որ սա Ձեր դեպքն է, կարող եք կրկին դիմել «Medicare Savings Program»-ի համար.

- **Անձամբ այցելելով կամ հեռախոսով:** Գնացեք կամ զանգահարեք Ձեր շրջանային տեղական գրասենյակ:
- **Փոստով կամ առցանց:** Դիմումի ձևը կգտնեք «Department of Health Care Services»-ի կայքում՝ <https://www.dhcs.ca.gov/formsandpubs/forms/Pages/Index-MC13-MC0805.aspx> հասցեով: Տպեք ձևաթուղթը և կա՛մ տարեք, կա՛մ փոստով ուղարկեք Ձեր տեղական շրջանային գրասենյակ:

Այս նամակին կից ուղարկված է տեղական շրջանային գրասենյակների ցանկը: Կամ այցելեք «Department of Health Care Services»-ի կայքը՝ [dhcs.ca.gov/col](https://www.dhcs.ca.gov/col) հասցեով:

Հարցերը

Եթե հարցեր ունեք այս փոփոխության մասին կամ օգնության կարիք ունեք, դիմեք Ձեր տեղական շրջանային գրասենյակ: «Medicare Savings Programs»-ի մասին ընդհանուր հարցերով զանգահարեք «Medi-Cal»-ի Օգնության գծին՝ **1-800-541-5555** համարով: Զանգն անվճար է:

Շնորհակալություն,

Department of Health Care Services
State of California